ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 033-20

«29» հունվարի 2020 թ.

Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին
(Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5,
էլ. փոստ՝ vdzor@mta.gov.am,
Հեռ.՝ (0281) 2-25-22)

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր
Աստղիկ Մաթևոսյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Մեր նախորդ հարցմամբ խնդրել էինք տրամադրել Վայոց Ձորի մարզպետարանում 2019 թվականին աշխատակիցներին հատկացված պարգևատրումների ընդհանուր չափը: Մարզպետարանի իրավաբանական վարչության (կամ բաժնի) կողմից տեղեկատվության տրամադրումը մերժվել էր գրավոր կերպով: Դրանից հետո ֆինանսական վարչության (կամ բաժնի) ղեկավարը հեռախոսով բանավոր կերպով ինձ հետ զրույցում տրամադրել է կառույցում պարգևատրումների ընդհանուր չափը և նշել, որ դա մոտավոր թիվ է: Միաժամանակ նշել է, որ թաքցնելու որևէ բան չկա, և որ կարող են տրամադրել ոչ թե մոտավոր, այլ հստակ թիվը, եթե զանգենք հաջորդ օրը:

Հաշվի առնելով, որ AntiFake.am-ը հանրությանը տրամադրում է ստուգված և պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություն, խնդրում եմ տրամադրել 2019 թվականին մարզպետարանում աշխատակիցներին հատկացված պարգևավճարների ընդհանուր չափը գրավոր տարբերակով:

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 0581
30.01.2020

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

Կանխավ շնորհակալ եմ՝

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր՝ **Ա. Մաթևոսյան**

«29» հունվարի 2020 թ.